ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/100/101

ք. Երևան «4» «11» 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս **Արթուր Սողոմոնյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՈՍԿԱՆՅԱՆՇԻՆ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Նվեր Ոսկանյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Եղվարդ համայնքի Զովունի գյուղի 38 փողոցի խմելու ջրագծի մասնակի հիմնանորոգման» և «Եղվարդ համայնքի Սարալանջ գյուղի խմելու ջրագծի հիմնանորոգման»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են՝**

Չափաբաժին 1՝ «Եղվարդ համայնքի Զովունի գյուղի 38 փողոցի խմելու ջրագծի մասնակի հիմնանորոգման» աշխատանքների համար սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 90 օր,

Չափաբաժին 2՝ «Եղվարդ համայնքի Սարալանջ գյուղի խմելու ջրագծի հիմնանորոգման» աշխատանքների համար 2020 թվականի մարտի 1-ից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 90 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք՝ համաձայն **Հավելված 6-ի:**

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (հավելված 5) և ծավալաթերթին (հավելված 1) համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային

փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **16,900,000 (տասնվեց միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, որից՝**

1-ին չափաբաժին՝ 9,650,000 (ինը միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

2-րդ չափաբաժին՝ 7,250,000 (յոթ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և

---

[1] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը

խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է **19 էջից,** կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5, N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«ՈՍԿԱՆՅԱՆՇԻՆ» ՍՊ ընկերություն
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,	Հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք.
Կ.Ուլնեցու 31	Եղվարդ, Գայի փ. 30
ՀՎՀՀ՝00846441	Հեռ.՝ +37499800810
Հ/Հ՝ 900018001231	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Կենտրոնական գանձապետարան	Հ/Հ 1660012320310100
Գործադիր տնօրեն	ՀՎՀՀ 03309315
Արթուր Սողոմոնյան	Տնօրեն
	Նվեր Ոսկանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 4 » « 11 » 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/100/101 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-Նախահաշիվ

Եղվարդ համայնքի Զովունի գյուղի 38 փողոցի խմելու ջրագծի մասնակի հիմնանորոգում

հ/հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափ. միավոր	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհանուր արժեքը, հազ. դր.
1	2	3	4	5	6	7
		Ջրագիծ - 1				
1	27-125	Ասֆալտոբետոնե ծածուլքի կտրում -սղոցում	100մ	14.62	34.76	508.18
2	27-33	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում բարձ. ինքն.	մ³	77.3	4.56	352.31
3	Գ310-10	Շին աղբի տեղափոխում մինչև 10 կմ	տն	154.60	2.59	400.64
4	1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով կողլցում	1000մ³	0.6481	614.62	398.33
5	1-1593	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով բարձելով ինքնաթափ մեքենաներին	1000մ³	0.1680	749.36	125.89
6	1-961	Բնահողերի մշակում 3-րդ կարգի ձեռքով	մ³	42.0	2.34	98.30
7	27-19	Նախապատ. շերտ ավազից	մ3	42.0	4.05	170.04
8	27-19	Խողովակի պաշտպանիչ շերտ ավազով	մ³	126.0	4.05	510.11
9	1-1635	Բնահողի հետլիցք լիցք մեխանիզ. տոփանումով	1000մ³	0.480	86.38	41.47
10	Գ310-3	Տեղափոխում 3 կմ	տն	302.4	1.35	407.51
11	27-142	Խճային/բազալտ/ հիմքի կառուցում 12 սմ հաստու-	100մ²	8.581	220.91	1895.63
	27-145	թյամբ բիտումի տարածումով 4.12տն/ 1000 մԱ				
12	27-164-1	Ծածկի ներքին շերտի իրականացում H=6սմ	100մ²	8.581	500.76	4296.99
13	27-165-1 27-164-2	խոշորահատիկ ա/բետոնե խառնուրդից Ծածկի վերին շերտի իրականացում H=3սմ	100մ²	8.581	274.45	2355.05
14	27-165-2 22-117	«Բ» տիպի ա/բետոնե խառնուրդից Պոլիէթիլենային խողովակի տեղադրում	մ	540.0	2.71	1465.91
15	22-117	d=90մմ PN 10,0/փորձարկումով/ Պոլիէթիլենային խողովակի տեղադրում	մ	150.0	1.05	157.25
16	22-117	d=50մմ PN 10,0/փորձարկումով/ Պոլիէթիլենային խողովակի տեղադրում	մ	41.0	0.80	32.98
17	22-399	d=40մմ PN 10,0/փորձարկումով/ Միացում գոյություն ունեցող պող.ջրագ. d=100մմ	տեղ	1.0	4.68	4.68
18	Շուկա	Պոլիէթիլենե միջադիր d=90մմ	հատ	1.0	0.75	0.75
19	Շուկա	Պողպատե ազատ կցաշուրթի տեղադրում d=90մմ	հատ	1.0	3.51	3.51
20	22-429	Պողպատե կցաշուրթի տեղադրում d=100մմ	հատ	1.0	2.83	2.83
21	22-68	Պողպատե պատյանի տեղադրում d=125*4մմ	մ	20.0	7.54	150.76
22	22-128	Պողպատե խողովակ նորմալ հակակոռոզիոն մեկուսացում d=125*4մմ	մ²	7.9	0.98	7.72
23	Շուկա	Պոլիէթիլենային քառաբաշխիչ 90*50	հատ	1.0	10.10	10.10
24	Շուկա	Պոլիէթիլենային եռաբաշխիչ 90*50	հատ	2.0	7.59	15.18
26	Շուկա	Պոլիէթիլենե խցափակում d=50մմ	հատ	4.0	2.09	8.38
27	Շուկա	Պոլիէթիլենե խցափակում d=40մմ	հատ	1.0	1.88	1.88
28	Շուկա	Պոլիէթիլենե արտուղում d=90 a=90 աստիճան	հատ	2.0	3.77	7.53

		Ե/Բ Դիտահոր D =1,0 H=1,5				
1	11-6.	Խճի նախաշերտի կառուցում 100մմ	մ³	0.15	13.64	2.05
2	22-446	Դիտ. կառուց. հավաք. ե/բ յուատ,КС 10-9, КС 10-9,	մ³	0.40	43.21	17.28
3	22-446	Հավաքովի ե/բ հիմք ПН 10	մ³	0.18	43.21	7.78
4	Շուկա	Ե/Բ Դիտահոր 1000 մմ	հատ	1	43.63	43.63
5	22-446	Հավաքովի ե/բ ծածկ ПП - 10	մ³	0.12	43.21	5.18
6	Շուկա	Ե/Բ Կափարիչ 1000 , մտոցով	հատ	1.0	99.72	99.72
7	22-383	Սողնակ-փականի տեղադրում d=50 մմ	հատ	1	8.25	8.25
8	Շուկա	Պոլիէթիլենային եռաբաշխիչ 90*50	հատ	1.0	7.59	7.59
9	22-429	Պողպատե կցաշուրթի տեղադրում d=50մմ	հատ	1.0	2.83	2.83
10	22-393	Օդահեռի տեղադրում 50 մմ pn 10	հատ	1.0	43.89	43.89
11	Շուկա	Պողպատե ազատ կցաշուրթ Φ63/պոլիէթ/ համար/	հատ	1.0	2.69	2.69
12	Շուկա	Պոլիէթիլենային միջադիր Φ50	հատ	1.0	1.79	1.79
13	Շուկա	Ռետինե միջադիր Φ50	հատ	1.0	0.45	0.45
14	8-27.	Հավաքովի ե/բ դիտահորի արտաքին պատերի ջրամեկուսացում բիտումի մածիկով	100 մ²	0.054	118.79	6.41
		Ընդամենը				13679.46
		Ա Ա Հ 20 %				2735.892
		Ընդամենը				16415.35

Եղվարդ համայնքի Սարալանջ գյուղի խմելու ջրագծի հիմնանորոգում

հ/հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափ. միավոր	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհանուր արժեքը, հազ. դր.
1	2	3	4	5	6	7
		Ջրագիծ - 1				
1	1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով	1000մ³	0.2820	618.22	174.34
2	1-1593	կողլցում 3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով	1000մ³	0.13	753.75	97.99
3	1-961	բարձելով ինքնաթափ մեքենաներին Բնահողերի մշակում 3-րդ կարգի ձեռքով	մ³	30.0	2.35	70.62
4	27-19	Նախապատ. շերտ ավազից	մ3	32.0	6.60	211.34
5	27-19	Խողովակի պաշտպանիչ շերտ ավազով	մ³	98.0	1.20	117.45
6	1-1635	Բնահողի հետլիցք լիցք մեխանիզ. տոփանումով	1000մ³	0.312	86.89	27.11
7	Գ310-3	Տեղափոխում 3 կմ	տն	234.0	1.36	317.18
8	22-126	Պող. խողովակների նորմալ հակակոռոզիոն մեկուսացում բիտումի մածիկով 108 մմ	մ	271.0	0.90	245.08
9	17-66	Պող.խողովակների ապամոնտժում d=108մմ	մ	271.0	0.87	235.60
10	24-.4	Պողպատե խողովակի տեղադրում d=108մմ առանց նյութի արժեքի	մ	244.0	1.83	446.95
11	22-117	Պոլիէթիլենային խողովակի տեղադրում	մ	194.0	2.73	529.73
12	22-397	d=90մմ PN 10,0/փորձարկումով/ Բաժանորդների միացումների վերականգ.d=20մմ	հատ	9.0	2.55	22.96
13	19-36	Պողպատե խողովակի տեղադրում d=20մմ	մ	18.0	1.16	20.96
14	22-399	Միացում գոյություն ունեցող պող.ջրագ. d=108մմ	տեղ	1.0	4.70	4.70
15	15-614	Մետաղական խողովակների յուղաներկում /2 շերտ/	100մ²	0.012	126.38	1.52

16	24-.4	Պողպատե խողովակի տեղադրում d=108*4.0մմ	մ	27.0	7.67	207.20
17	Շուկա	խողովակի արժեքով Ռետինե միջադիր d=100մմ	հատ	1.0	0.45	0.45
18	Շուկա	Պոլիէթիլենե միջադիր d=90մմ	հատ	1.0	0.75	0.75
19	Շուկա	Պոլիէթիլենե գոտի-միացում de90xde20	հատ	8.0	2.62	20.93
20	Շուկա	Պոլիէթիլենե խցափակում de90	հատ	1.0	1.72	1.72
21	22-429	Պողպատե կցաշուրթի տեղադրում d=90մմ	հատ	1.0	2.85	2.85
22	Շուկա	Պողպատե ազատ կցաշուրթի տեղադրում d=100մմ	հատ	1.0	3.16	3.16
23	Շուկա	Պոլիէթիլենե արտուղում d=90 a=60 աստիճան	հատ	1.0	4.08	4.08
24	Շուկա	Պոլիէթիլենե արտուղում d=90 a=45 աստիճան	հատ	1.0	4.08	4.08
		Ճյուղ - 1				
1	1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով կողլցում	1000մ³	0.2920	618.22	180.52
2	1-1593	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով բարձելով ինքնաթափ մեքենաներին	1000մ³	0.1350	753.75	101.76
3	1-961	Բնահողերի մշակում 3-րդ կարգի ձեռքով	մ³	30.0	2.35	70.62
4	27-19	Նախապատ. շերտ ավազից	մ3	34.0	4.07	138.46
5	27-19	Խողովակի պաշտպանիչ շերտ ավազով	մ³	101.0	1.20	121.04
6	1-1635	Բնահողի հետլիցք լիցք մեխանիզ. տոփանումով	1000մ³	0.322	86.89	27.98
7	Գ310-3	Տեղափոխում 3 կմ	տն	243.0	1.36	329.38
8	17-66	Պող.խողովակների ապամոնտժում d=108մմ	մ	481.0	0.87	418.17
9	24-.4	Պողպատե խողովակի տեղադրում d=108մմ ապամոնտաժված խողովակներից	մ	433.0	1.83	793.15
10	22-128	Պողպատե խողովակ նորմալ հակակոռոզիոն մեկուսացում d=108*4մմ	մ	481.0	0.98	472.55
11	24-.4	Պողպատե խողովակի տեղադրում d=108*4.0մմ խողովակի արժեքով	մ	48.0	7.67	368.35
12	22-397	Բաժանորդների միացումների վերականգ.d=20մմ	հատ	14.0	2.55	35.72
13	19-36	Պողպատե խողովակի տեղադրում d=20մմ	մ	28.0	1.16	32.60
14	15-614	Մետաղական խողովակների յուղաներկում /2 շերտ/	100մ²	0.018	126.38	2.27
15	22-399	Միացում գոյություն ունեցող պող.ջրագ. d=108մմ	տեղ	1.0	4.70	4.70
		Ճյուղ - 2				0.00
1	1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով կողլցում	1000մ³	0.0190	618.22	11.75
2	1-1593	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով բարձելով ինքնաթափ մեքենաներին	1000մ³	0.0080	753.75	6.03
3	1-961	Բնահողերի մշակում 3-րդ կարգի ձեռքով	մ³	2.0	2.35	4.71
4	27-19	Նախապատ. շերտ ավազից	մ3	2.0	4.07	8.14
5	27-19	Խողովակի պաշտպանիչ շերտ ավազով	մ³	6.0	1.20	7.19
6	1-1635	Բնահողի հետլիցք լիցք մեխանիզ. տոփանումով	1000մ³	0.021	86.89	1.82
7	Գ310-3	Տեղափոխում 3 կմ	տն	15.0	1.36	20.33
8	17-66	Պող.խողովակների ապամոնտժում d=108մմ	մ	30.0	0.87	26.08
9	24-.4	Պողպատե խողովակի տեղադրում d=108*4.0մմ առանց արժեքի	մ	27.0	1.83	49.46
10	22-128	Պողպատե խողովակ նորմալ հակակոռոզիոն մեկուսացում d=108*4մմ	մ	30.0	0.98	29.47
11	22-399	Միացում գոյություն ունեցող պող.ջրագ. d=108մմ	տեղ	1.0	4.70	4.70
12	Շուկա	Բաժանորդների միացումների վերական. d=20մմ	հատ	4.0	2.55	10.21
13	19-36	Պողպատե խողովակի տեղադրում d=20մմ	մ	8.0	1.16	9.31
14	15-614	Մետաղական խողովակների յուղաներկում /2 շերտ/	100մ²	0.005	126.38	0.63
15	24-.4	Պողպատե խողովակի տեղադրում d=108*4.0մմ	մ	3.0	7.67	23.02

		արժեքով				
		Ճյուղ - 3				
1	1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով	1000մ^3	0.0750	618.22	46.37
2	1-1593	կողլցում 3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով	1000մ^3	0.0350	753.75	26.38
3	1-961	բարձելով ինքնաթափ մեքենաներին Բնահողերի մշակում 3-րդ կարգի ձեռքով	մ^3	8.0	2.35	18.83
4	27-19	Նախապատ. շերտ ավազից	մ3	9.0	4.07	36.65
5	27-19	Խողովակի պաշտպանիչ շերտ ավազով	մ^3	26.0	1.20	31.16
6	1-1635	Բնահողի հետլիցք լիցք մեխանիզ. տոփանումով	1000մ^3	0.083	86.89	7.21
7	Գ310-3	Տեղափոխում 3 կմ	տն	63.0	1.36	85.39
8	17-66	Պող.խողովակների ապամոնտժում d=108մմ	մ	124.0	0.87	107.8
9	24-.4	Պողպատե խողովակի տեղադրում d=108մմ ապամոնտաժված խողովակներից	մ	112.0	1.83	205.35
10	22-128	Պողպատե խողովակ նորմալ հակակոռոզիոն մեկուսացում d=108*4մմ	մ	124.0	0.98	121.82
11	22-399	Միացում գոյություն ունեցող պող.ջրագ. d=108մմ	տեղ	1.0	4.70	4.70
12	24-.4	Պողպատե խողովակի տեղադրում d=108*4.0մմ արժեքով	մ	12.0	7.80	93.64
		Ե/ Բ փականային հոր D =1,0 H=1,5				
1	11-6.	Խճի նախաշերտի կառուցում 100մմ	մ^3	0.30	13.97	4.19
2	22-446	Դիտ. կառուց. հավաք. ե/բ օղակ,КС 10-9,	մ^3	0.48	42.72	20.51
3	22-446	Դիտ. կառուց. հավաք. ե/բ օղակ,КС 10-6	մ^3	0.32	42.72	13.67
4	Շուկա	ե/բ օղակ,КС 10-9,	հատ	2	27.58	55.17
5	Շուկա	ե/բ օղակ,КС 10-6	հատ	2	14.44	28.89
6	22-446	Հավաքովի ե/բ հիմք ПН 10	մ^3	0.36	42.72	15.38
7	Շուկա	հիմք ПН 10	հատ	2	16.55	33.10
8	22-446	Հավաքովի ե/բ ծածկ ПП - 10	մ^3	0.24	42.72	10.25
9	Շուկա	Ե/ Բ Կափարիչ 1000 , մտոցով	հատ	2.0	100.30	200.61
10	22-383	Սողնակ-փականի տեղադրում d=100 մմ	հատ	2	23.72	47.43
11	22-429	Պողպատե կցաշուրթի տեղադրում d=100մմ	հատ	4.0	2.85	11.40
12	Շուկա	Ռետինե միջադիր Φ100	հատ	4.0	0.45	1.81
		Բաժանարար հոր ԲՀ-1				
1	1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով կողլ	1000մ^3	0.0150	618.22	9.27
2	1-961	Բնահողերի մշակում 3-րդ կարգի ձեռքով	մ^3	2.0	2.35	4.71
3	1-1635	Բնահողի հետլիցք լիցք մեխանիզ. տոփանումով	1000մ^3	0.006	86.89	0.52
4	11-2.	Բնահողի տոփանում խճով 15-20մմ	100մ^2	0.1574	36.66	5.77
5	1-1593	Ավելորդ գրունտի բարձում ինքնաթ.էքսկավ.	1000մ^3	0.0110	753.75	8.29
6	Գ310-1	Տեղափոխում 1 կմ	տն	19.8	0.94	18.58
7	Շուկա	Ծխնի	զույգ	2.0	1.81	3.61
7	ինֆ,տեղ	Ամրան Ա-3 d=8	տն	0.0796	482.71	38.42
8	ինֆ,տեղ	Ամրան Ա-3 d=10	տն	0.0197	486.79	9.61
9	Շուկա	Անկյունակ 40*40*3	մ	3.0	1.08	3.24
10	ինֆ տեղ	Թերթավոր պողպատ 4 մմ հաստ	մ^2	0.493	18.33	9.03
11	6-127	Ե/բետոնե պատերի և հատակի կառուցում Բ-15,0 բետոնից	մ^3	4.94	84.99	419.87
12	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում /2 շերտ/	100մ^2	0.05	126.38	6.32
13	11-6.	Խճի դրենաժային շերտ	մ^3	0.20	13.97	2.79
14	15-256	Հատակի սվաղում g/ավազային շաղախով	100մ^2	0.0012	172.06	0.21
15	22-383	Սողնակ-փականի տեղադրում d=100 մմ	հատ	3	23.72	71.15
16	16-60	պողպ.խողովակի տեղ. d=159*4,5մմ պաշտ պատյան	մ	1.08	11.51	12.43

17	6-2.	Բետոնե բարձիկներ B - 7,5 բետոնից	մ³	0.081	90.05	7.29
11	22-429	Պողպատե կցաշուրթի տեղադրում d=100մմ	հատ	6.0	2.85	17.10
12	Շուկա	Ռետինե միջադիր Φ100	հատ	6.0	0.45	2.71
18	6-173	Ե/բ միաձույլ ծածկի կառուցում Բ-15 բետոնից	մ³	0.94	71.16	66.89
19	8-27.	Դիտահորի արտաքին պատերի ջրամեկուսացում բիտումի մածիկով	100 մ²	0.156	98.71	15.40
		Բաշխիչ հոր 3հատ				
1	1-961	Բնահողերի մշակում 3-րդ կարգի ձեռքով	մ3	9.0	2.35	21.19
2	1-969	Բնահողի հետլիցք ձեռքով	մ3	1.20	1.20	1.44
3	1-970	Բնահողի փռում տեղում	մ3	7.80	1.48	11.52
4	11-6.	Խճի նախաշերտի կառուցում 100մմ	մ3	0.57	13.97	7.97
5	Շուկա	Ծխնի	զույգ	12.0	1.81	21.67
6	Շուկա	Մետաղական բաժանարար d=108 մմ	մ	3.0	5.81	17.44
7	ինֆ,տեղ	Մետաղական ցանց Br 100*100*4	մ2	18	0.76	13.65
8	Շուկա	Անկյունակ 75*75*6	մ	17.4	3.93	68.38
9	Շուկա	_Շերտապողպատ 50*80*5	մ	0.48	0.50	0.24
10	ինֆ,տեղ	Ամրան Ա-3 d=10	տն	0.0072	486.79	3.50
11	ինֆ տեղ	Թերթավոր պողպատ 4 մմ հաստ	մ2	5.940	18.33	108.90
12	ինֆ տեղ	d=89*3,5մմ պաշտ պատյան	մ	1.80	4.15	7.46
13	ինֆ տեղ	d=57*3մմ պաշտ պատյան	մ	5.40	2.24	12.08
14	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում /2 շերտ/	100մ2	0.09	126.38	11.37
15	16-134	Գնդաձև փականների տեղադրում d=15մմ	հատ	36.0	4.12	148.41
16	6-2.	Բաժանարար հոր բետոն B-12,5	մ3	2.7	44.45	120.01
17	6-127	Ե/բետոնե պատերի և հատակի կառուցում B-12,5 բետոնից	մ3	2.70	81.27	219.43
18	6-2.	Բետոնե բարձիկներ B - 7,5 բետոնից	մ3	0.021	41.40	0.87
19	8-27.	Դիտահորի արտաքին պատերի ջրամեկուսացում բիտումի մածիկով	100մ2	0.162	98.71	15.99
		Գոյութ. ունեց. ՕԿՋ-ի վերակ.մետաղ.մտոց				
1	1-961	Բնահողի հեռացում ձեռքով	մ³	15.0	2.35	35.31
2	22-446	Դիտ. կառուց. հավաք. ե/բ օղակ	մ³	0.24	42.72	10.25
3	Շուկա	ե/բ օղակ,КС 10-6	հատ	1	14.44	14.44
4	23-160	Գոյություն ունեցող բետոնե մտոցի քանդում	մ³	1,1	18.43	20.27
5	22-446	Հավաքովի ե/բ ծածկ 1,2*1,2	մ³	0.28	42.72	11.96
6	Շուկա	Ե/ Բ Կափարիչ 1000 , մտոցով	հատ	1.0	100.3048	100.30
7	Շուկա	Ծխնի	զույգ	2.0	1.805477	3.61
8	Շուկա	Կախովի փական	հատ	1.0	1.805477	1.81
9	ինֆ տեղ	Թերթավոր պողպատ 4 մմ հաստ	մ²	1.0	18.35568	18.36
10	ինֆ,տեղ	Ամրան Ա-3 d=10	տն	0.0015	486.7896	0.73
11	ինֆ,տեղ	Ամրան Ա-1 d=18	տն	0.0010	486.7896	0.49
12	Շուկա	Անկյունակ 75*75*6	մ	4.4	9.779665	43.03
13	Շուկա	Շերտապողպատ 50*80*5	մ	0.1	0.496506	0.04
14	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում /2 շերտ/	100մ²	0.067	126.3772	8.47
15	23-227	Շին.աղբի հավաքում բարձում ինքնաթափին	տն	1.64	0.492215	0.81
16	Գ310-5	Տեղափոխում 5կմ	տն	1.64	1.737783	2.85

17	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ	100 մ²	0.300	234.359	70.31
	11-56	50մմ հաստ. իզոգամի տակ				
18	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ	100 մ²	0.300	234.359	70.31
	11-56	50մմ հաստ. իզոգամի վրա				
19	1-969	Բնահողի հետլիցք ձեռքով	մ³	15.00	1.202716	18.04
20	11-18	Ջրամեկուսացում ռուբերոիդով իզոգամ-4մմ /1 շերտ /առաջին շերտ	100 մ²	0.300	298.1508	89.45
21	11-18	Ջրամեկուսացում ռուբերոիդով իզոգամ-4մմ հաջորդ շերտ /1 շերտ /	100 մ²	0.300	251.0447	75.31
		Ընդամենը				9447.50
		Ա Ա Հ 20%				1889.50
		Ընդամենը				11337.00

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՈՍԿԱՆՅԱՆՇԻՆ» ՍՊ ընկերություն
Հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Գայի փ. 30
Հեռ.՝ +37499800810
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660012320310100
ՀՎՀՀ 03309315
Տնօրեն
Նվեր Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«4» «11» 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/100/101** ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափաբաժին 1

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	«Եղվարդ համայնքի Զովունի գյուղի 38 փողոցի խմելու ջրագծի մասնակի հիմնանորոգում»	***Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից***	***90 օրացուցային օր***
ԸՆԴԱՄԵՆԸ			***90 օրացուցային օր***

Չափաբաժին 2

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	«Եղվարդ համայնքի Սարալանջ գյուղի խմելու ջրագծի հիմնանորոգում»	***2020 թվականի մարտի 1***	***90 օրացուցային օր***
ԸՆԴԱՄԵՆԸ			***90 օրացուցային օր***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՈՍԿԱՆՅԱՆՇԻՆ» ՍՊ ընկերություն
Հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Գայի փ. 30
Հեռ.՝ +37499800810
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660012320310100
ՀՎՀՀ 03309315
Տնօրեն
Նվեր Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
« 4 » « 11 » 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/100/101** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի																	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ - 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում														
			2019թ		2020թ												
			նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231131/ 569	ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշխատանքներ	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000	9,650,000
2	45231131/ 570	ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշխատանքներ	...	...	...	...	7,250,000	7,250,000	7,250,000	7,250,000	7,250,000	7,250,000	7,250,000	7,250,000	7,250,000	7,250,000	7,250,000

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՈՍԿԱՆՅԱՆՇԻՆ» ՍՊ ընկերություն
Հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Գայի փ. 30
Հեռ.՝ +37499800810
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660012320310100
ՀՎՀՀ 03309315
Տնօրեն
Նվեր Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« 4 » « 11 » 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/100/101** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » « » 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/100/101** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
« 4 » « 11 » 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/100/101** ծածկագրով պայմանագրի*

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՈՍԿԱՆՅԱՆՇԻՆ» ՍՊ ընկերություն
Հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Գայի փ. 30
Հեռ.՝ +37499800810
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1660012320310100
ՀՎՀՀ 03309315
Տնօրեն
Նվեր Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 6
« 4 » « 11 » 2019 թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/100/101** ծածկագրով պայմանագրի*

Պատվիրատու
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Կատարող
_____
_____
գտնվելու վայրը _____
հ/հ_____
հվհհ_____

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **«Եղվարդ համայնքի Զովունի գյուղի 38 փողոցի խմելու ջրագծի մասնակի հիմնանորոգման» և «Եղվարդ համայնքի Սարալանջ գյուղի խմելու ջրագծի հիմնանորոգման»** աշխատանքներ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/100/101***
Սույնով Պատվիրատուն և **ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ** համայնքը, մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/100/101*** պայմանագրի **3.2.3** կետի պահանջները, կազմեցին սույն **ԱԿՏ-ը** հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված չափաբաժին -------ով սահմանված «----------» աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից Նախագծով նախատեսված տարածքը:

Տարածքը հանձնեց	Տարածքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.